



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» մարտի 2024 թվականի N 214

**ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 11.04.2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 97 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՋԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու նպատակով՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել աճուրդային հանձնաժողով հետևյալ կազմով.

- Արմեն Գրիգորյան Ստեփանավան համայնքի ղեկավար-հանձնաժողովի նախագահ
- Սամվել Ֆրանգյան Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ աճուրդավաթ
- Անուշ Կիրակոսյան Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ արձանագրող

Հանձնաժողովի անդամներ՝

- Լևոն Քալանթարյան Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղանտեսության և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ
- Սիրանուշ Մելիքսեթյան Ստեփանավանի համայնքի ղեկավարի օգնական
- Ռաֆայել Սիմոնյան Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ
- Էլմիրա Ռևազյան Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
- Արթուր Սավթայան Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր վարչական բնակավայրի ղեկավար
- Գևորգ Մանուկյան Ստեփանավան համայնքի Ուրասար վարչական բնակավայրի ղեկավար

- Սամվել Անտոնյան Ստեփանավան համայնքի Արմանիս վարչական բնակավայրի ղեկավար
- Արմեն Փ. Գրիգորյան Ստեփանավան համայնքի ավագանի
- Ջոն Կիրակոսյան Ստեփանավան համայնքի ավագանի

2. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ղեկավարի 11.04.2022 թվականի թիվ 97 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» մարտի 2024 թվականի N 215

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԱՅՆ ՕՐԻՆԱՆԱԿԱՑՆԵԼՈՒ և ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարդան Սլավիկի Նալբանդյանի /ծնված 19.02.1984թ. նույնականացման քարտ 001721778/ կողմից 10.01.2023թ. ներկայացված թիվ Ն-31 դիմումը, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» ԱԶ-ի կողմից կազմված 29.12.2023թ. թիվ 20234BJYKK ծածկագրով հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը և 27.12.2023թ. կազմված ինքնակամ կառույցի հաշվառման փաթեթի վերաբերյալ համաձայնությունը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 13-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ**.

1. Ճանաչել օրինական մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. 06-007-0313-0001-ից կադաստրային ծածկագրում գտնվող Վարդան Սլավիկի Նալբանդյանի կողմից 2005 թվականին ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող՝ 72.6 քմ մակերեսով կիսակառույց շինության համար: Առանձնացնել զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի թվին չդասվող 0.03324 հա մակերեսով հողամաս համաձայն հավելվածի՝ բնակավայրի նպատակային նշանակության, խառը կառուցապատման

գործառնական նշանակության և նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքը:

2. Հողամասի նպատակային, գործառնական նշանակությունները, սահմանանային չափերը և մակերեսը հաստատել համաձայն «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» ԱԶ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագիծի:
3. Ինքնակամ կառուցված կիսակառույց շինությունը՝ չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Մարշալ Բաղրամյան փողոց թիվ 182/7 կիսակառույց շինություն:
5. 5-աշխատանքային օրվա ընթացքում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում սույն որոշման առաջին կետում նշված շինությունը և 0.03324 հա մակերեսով զբաղեցված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն նշված շինությունը իրականացրած անձին՝ կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» մարտի 2024 թվականի N 216

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՆԻՍ ԳՅՈՒՂԻ 06-007-0622-0023
ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՐԱՐԱՏ
ԱՎԵՏԻՔԻ ՄԽՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ
ՎԵՐԱՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի Արմանիս գյուղի բնակիչ Արարատ Ավետիքի Մխոյանի լիազոր ներկայացուցիչ՝ Ակսել Սաշիկի Ալեքսանյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 12.04.1991թ. թիվ 5 որոշումից քաղվածքը, «Գագիկ Մետրոպոլիտան» ԱԶ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ 510-Ն օրենքով՝ **որոշում եմ**

1. Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի գ. Արմանիս 06-007-0622-0023 ծածկագրի տակ գտնվող, ըստ փաստացի չափագրման 0.7444 հա մակերեսով վարելահողի հողահատկացման փաստաթղթերի հիմքերը:

ա/ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-106-0022-0023 ծածկագրի տակ գտնվող վարելահողի մակերեսը՝ 0. 7444 հա

բ/ Հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Արարատ Ավետիքի Մխոյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» մարտի 2024 թվականի N 217

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՆԻՍ ԳՅՈՒՂԻ 06-007-0619-0250
ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՐԱՐԱՏ
ԱՎԵՏԻՔԻ ՄԽՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ
ՎԵՐԱՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի Արմանիս գյուղի բնակիչ Արարատ Ավետիքի Մխոյանի լիազոր ներկայացուցիչ՝ Ակսել Սաշիկի Ալեքսանյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 12.04.1991թ. թիվ 5 որոշումից քաղվածքը, «Գազիկ Մեսրոպյան» ԱԶ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ 510-Ն օրենքով՝ որոշում եմ.

1. Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի գ. Արմանիս 06-007-0619-0250 ծածկագրի տակ գտնվող, ըստ փաստացի չափագրման 0.4136 հա մակերեսով վարելահողի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը:

ա/ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-007-0619-0250 ծածկագրի տակ գտնվող վարելահողի մակերեսը՝ 0. 4136 հա

բ/ Հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Արարատ Ավետիքի Մխոյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» մարտի 2024 թվականի N 218

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՆԻՍ ԳՅՈՒՂԻ 06-007-0624-0047
ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՐԱՐԱՏ
ԱՎԵՏԻՔԻ ՄԵՌՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ
ՎԵՐԱՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի Արմանիս գյուղի բնակիչ Արարատ Ավետիքի Մխոյանի լիազոր ներկայացուցիչ՝ Ակսել Սաշիկի Ալեքսանյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 12.04.1991թ. թիվ 5 որոշումից քաղվածքը, «Գագիկ Մեսրոպյան» ԱԶ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ 510-Ն օրենքով՝ որոշում եմ.

1. Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի գ. Արմանիս 06-007-0624-0047 ծածկագրի տակ գտնվող, ըստ փաստացի չափագրման 0.68932 հա մակերեսով խոտհարքի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը:

ա/ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-007-0624-0047 ծածկագրի տակ գտնվող խոտհարքի մակերեսը՝ 0Պ68932 հա

բ/ Հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի

- Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Արարատ Ավետիքի Մխոյանին:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



(Handwritten signature)

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» մարտի 2024 թվականի N 219

**ՀՀ ԼՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ԵԿԵՂԵՑՈՒ ՓՈՂՈՑ
ԹԻՎ 1 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ»
ԱԶ-Ի ԿՈՂՄԻՑ 11.12.2023Թ. ԿԱԶՄՎԱԾ /ՉԱՓԱԳՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ
ԾԱԾԿԱԳԻՐ 2023XRJZ9K/ ՃՇՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ
ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ժորա Անուշավանի Սիմոնյանի կողմից ներկայացված դիմումը՝ 15.12.2023թ. թիվ Կ-15122023-06-0226 գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը, 29.03.2004թ. թիվ 1066404 սեփականության իրավունքի վկայականը «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱԶ-ի կողմից կազմված 11.12.2023թ. թիվ 2023XRJZ9K ծածկագրով հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը, համայնքի ղեկավարի 16.11.2022թ. թիվ 508 և 01.12.2023թ. թիվ 923 որոշումները, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Հաստատել ք. Ստեփանավան Եկեղեցու փողոց թիվ 1 հասցեի 0.066 հա հողամասի սահմանային չափերը և հողամասում առկա շենք, շինությունների տեղադիրքերը և երկրաչափական տեսքերը համաձայն «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱԶ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի, ըստ որի հողամասում առկա շինությունների տեղադիրքերը համապատասխանում են թիվ 1036404 սեփականության վկայականի հողամասի հատակագիծը բաժնում նշված շինությունների տեղադիրքերին, որոնց նկատմամբ պետական գրանցման պահից առ օրս որևէ փոփոխություններ չեն իրականացվել:

2. Նշված հասեի անշարժ գույքի պետական գրանցման համար հիմք ընունել՝ համայնքի ղեկավար 16.11.2022թ. թիվ 508, 01.12.2023թ. թիվ 923 որոշումները և «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱԶ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծը /Չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր 2022WSUBDV/ :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» մարտի 2024 թվականի N 220

ՌՈՂԱ ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ստեփանավան համայնքի վարչական տարածքում Ռոզա Սահակյան անհատ ձեռնարկատերը 2024 թվականի փետրվարի 29-ին հայտ է ներկայացրել համայնքապետարանի ձեռնարկատիրական օբյեկտում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն ստանալու համար:

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 08.04.2022թ. «Ստեփանավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» թիվ 29-Ն որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և Ստեփանավան համայնքի ավագանու 23.01.2024թ. թիվ 03-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Ստեփանավան համայնքի Ռումինական փողոց թիվ 15^ա հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Ռոզա Սահակյանի հայտը բավարարել և նրան տալ իր դիմումի համաձայն 3.3 քմ մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 01.01.2024-31.03.2024թթ. ժամանակահատվածի համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հ. Մովսիսյանին՝ ենօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» մարտի 2024 թվականի N 221

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՍՄԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ
ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հասմիկ Բարսեղյանի 2024 թվականի մարտի 01-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 23.01.2024թ. թիվ 03-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Ստեփանավան համայնքի Սայաթ-Նովա փողոց թիվ 12 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Հասմիկ Բարսեղյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ընթացիկ տարվա առաջին եռամսյակի համար՝ 01.01.2024-31.03.2024թթ.:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հ. Մովսիսյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին՝ տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» մարտի 2024 թվականի N 222

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԵՂԱՄ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գեղամ Այվազյանի 2024 թվականի մարտի 01-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 23.01.2024թ. թիվ 03-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Ստեփանավան համայնքի Բաղրամյան 134 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Գեղամ Այվազյանի հայտը բավարարել և նրան տալ տեխնիկական հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն ընթացիկ տարվա համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հ. Մովսիսյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» մարտի 2024 թվականի N 223

ԱՐԹՈՒՐ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻՑ ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ 19 ՇԵՆՔԻ ԹԻՎ 12 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՋԵՐՄԱԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման հավելված N 2-ի 24.4 կետի համաձայն՝ պետք է Ստեփանավան քաղաքի Ռումինական փողոցի թիվ 19 շենքի ջերմաարդիականացման սուբվենցիոն ծրագրի շրջանակներում՝ շենքի յուրաքանչյուր բնակիչ ծրագրով սահմանված 56.124.251 ՀՀ դրամի 5%-ի չափով ֆինանսական մասնակցություն ունենա կատարվող աշխատանքների ծախսերում:

Արթուր Մելիքսեթյանին պատկանող Ստեփանավան քաղաքի Ռումինական փողոցի 19 շենքի թիվ 12 հասցեում գտնվող 3 սենյականոց բնակարանի համար սուբվենցիոն ծրագրով սահմանված վճարման ենթակա գումարը կազմում է՝ 240000 /երկու հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ, որից վերջինս վճարել է 99700 /իննսունինը հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ: Ներկայումս Արթուր Մելիքսեթյանի պարտավորությունը Ստեփանավան համայնքի բյուջեի հանդեպ կազմում է 140300 /մեկ հարյուր քառասուն հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ 2023 թվականի դեկտեմբերի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի համաձայն՝ Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ Ռումինական փողոցի 19 շենքի թիվ 12 բնակարանի ջերմաարդիականացման սուբվենցիոն ծրագրով սահմանված վճարման ենթակա գումարը գանձելու նպատակով:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 2024 թվականի հունվարի 08-ին, ժամը՝ 11:00-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին

մանակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Արթուր Մելիքսեթյանը: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լուսմներին:

2024 թվականի հունվարի 08-ին տեղի ունեցած վարչական վարույթի լուսմների վերաբերյալ կազմվել է թիվ 3 արձանագրությունը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման հավելված N 2-ի 24.4 կետը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 59-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով **որոշում եմ**.

1. Քաղաքացի Արթուր Մելիքսեթյանից հոգուտ Ստեփանավան համայնքի բյուջե գանձել՝ 140300 /մեկ հարյուր քառասուն հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ, որպես Ռումինական փողոցի 19 շենքի թիվ 12 բնակարանի ջերմաարդիականացման սուբվենցիոն ծրագրով սահմանված վճարման ենթակա գումար:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ստեփանավան համայնքի ղեկավարին կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթ մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» մարտի 2024 թվականի N 224

ԱՐՄԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՑ ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ 10 ՇԵՆՔԻ ԹԻՎ 16 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՋԵՐՄԱԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՍՈՒՔՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման հավելված N 2-ի 24.4 կետի համաձայն՝ պետք է Ստեփանավան քաղաքի Ռումինական փողոցի թիվ 10 շենքի ջերմաարդիականացման սուբվենցիոն ծրագրի շրջանակներում՝ շենքի յուրաքանչյուր բնակիչ ծրագրով սահմանված 96.877.800 ՀՀ դրամի 5%-ի չափով ֆինանսական մասնակցություն ունենա կատարվող աշխատանքների ծախսերում:

Արման Հովսեփյանին պատկանող Ստեփանավան քաղաքի Ռումինական փողոցի 10 շենքի թիվ 16 հասցեում գտնվող 3 սենյականոց բնակարանի համար սուբվենցիոն ծրագրով սահմանված վճարման ենթակա գումարը կազմում է՝ 220000 /երկու հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ, որից վերջինս վճարել է 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ: Ներկայումս Արման Հովսեփյանի պարտավորությունը Ստեփանավան համայնքի բյուջեի հանդեպ կազմում է 120000 /մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ 2023 թվականի դեկտեմբերի 25-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի համաձայն՝ Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ Ռումինական փողոցի 10 շենքի թիվ 16 բնակարանի ջերմաարդիականացման սուբվենցիոն ծրագրով սահմանված վճարման ենթակա գումարը գանձելու նպատակով:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 2024 թվականի հունվարի 08-ին, ժամը՝ 15:00-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին

մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Արման Հովսեփյանը: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լուսմներին:

2024 թվականի հունվարի 08-ին տեղի ունեցած վարչական վարույթի լուսմների վերաբերյալ կազմվել է թիվ 4 արձանագրությունը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման հավելված N 2-ի 24.4 կետը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 59-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով **որոշում եմ**.

1. Քաղաքացի Արման Հովսեփյանից հոգուտ Ստեփանավան համայնքի բյուջե գանձել՝ 120000 /մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ, որպես Ռումինական փողոցի 10 շենքի թիվ 16 բնակարանի ջերմաարդիականացման սուբվենցիոն ծրագրով սահմանված վճարման ենթակա գումար:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ստեփանավան համայնքի ղեկավարին կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթ մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12» մարտի 2024 թվականի N 225

**ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի բնակիչներից ստացված դիմումները, սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, խոցելի ընտանիքներին սոցիալական ծառայությունների տրամադրման, սոցիալական աջակցության ծառայությունների բարելավման գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի թիվ 2 եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածով, Ստեփանավան համայնքի ավագանու 29.12.2021 թվականի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 16-Ա որոշմամբ և Ստեփանավան համայնքի ավագանու 08.11.2023 թվականի «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 08.02.2022 թվականի N 06-ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Ստեփանավան համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 114-Ն որոշմամբ՝ **որոշում եմ**

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից վերջիններիս ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ 325000 (երեք հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ (համաձայն հավելվածի):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



Հավելված
Ստեփանավան համայնքի ղեկավարի
12.03.2024թ թիվ 225 որոշման

Հ/Հ	Անուն, ազգանուն, հայրանուն	Սոցիալական աջակցության գումարի չափը /ՀՀ դրամ/
1	Արայիկ Ավոյան Նիկոլի	20 000
2	Անժելա Քարամյան Մակարի	20 000
3	Նինա Զիլավյան Հմայակի	30 000
4	Հասմիկ Կարապետյան Բաբկենի	15 000
5	Անահիտ Առաքելյան Սերյոժի	10 000
6	Սիրանուշ Զիլավյան Հակոբի	10 000
7	Գևորգ Աբրահամյան Մկրտիչի	10 000
8	Անիչկա Ամիրխանյան Գևորգի	10 000
9	Նինա Թամրազյան Խաչատուրի	15 000
10	Կիմա Դալլաքյան Գուրգենի	10 000
11	Ռուզաննա Սարգսյան Քյորողլու	10 000
12	Նարինե Ծովանյան Միշայի	15 000
13	Կոմիտաս Սարգսյան Սմբատի	15 000
14	Սոնիկ Այվազյան Արտավազդի	30 000
15	Սեդա Մելքոնյան Հարութի	15 000
16	Սվետիկ Մելիքյան Հարութի	10 000
17	Արայիկ Առաքելյան Հարությունի	10 000
18	Սեդա Ամիրխանյան Գևորգի	10 000
19	Սեդա Դիլանյան Զորիկի	20 000
20	Թամարա Չաչոյան Խդրի	15 000
21	Ալինա Կոնրադ Ստանիսլավի	25 000

Ընդամենը՝

325 000 դր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մարտի 2024 թվականի N 226

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՄԱՐՇԱԼ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 19/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲԱԲԿԵՆ ՂԱՐԻՔԻ ՊԱՌԱՎՅԱՆԻՆ
ՀԱՄԱՍԵՓԱՎԱՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Բաբկեն Ղարիքի Պառավանի կողմից 11.03.2023թ. ներկայացված թիվ Պ-240 դիմումը, 01.06.2011թ. թիվ 2506787 անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 02 փետրվարի 2002թ. թիվ 88 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության 15 ապրիլի 2021թ. թիվ 600-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Ստեփանավան համայնքի Մարշալ Բաղրամյան փողոցի 19/3 հասցեով բազմաբնակարան շենքի առաջին հարկում գտնվող, Բաբկեն Ղարիքի Պառավանին և Արևիկ Ռազմիկի Կատինյանին համասեփականության իրավունքով պատկանող 40.4 քմ ներքին մակերեսով բնակարանի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական գործառնական նշանակության, որպես առևտրի սրահ՝ հաշվի առնելով այն փաստը, որ շենքում ճարտարապետահատակագծային առաջադրանք և շինարարության թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ չեն կատարվել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մարտի 2024 թվականի N 227

**ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ստեփանավան համայնքի վարչական տարածքում Լուսինե Վարդանյան անհատ ձեռնարկատերը 2024 թվականի մարտի 13-ին հայտ է ներկայացրել համայնքապետարան իր ձեռնարկատիրական օբյեկտում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն ստանալու համար:

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 08.04.2022թ. «Ստեփանավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» թիվ 29-Ն որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և Ստեփանավան համայնքի ավագանու 23.01.2024թ. թիվ 03-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Ստեփանավան համայնքի Բաղրամյան փողոց թիվ 22/3 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Լուսինե Վարդանյանի հայտը բավարարել և նրան տալ իր դիմումի համաձայն 1.6 քմ մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 01.03.2024-31.03.2024թթ. ժամանակահատվածի համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հ. Մովսիսյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մարտի 2024 թվականի N 228

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 13.02.2024Թ. ԹԻՎ 101

ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ղեկավարի 13.02.2024թ. թիվ 101 որոշումը և ղեկավարվելով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ որոշում եմ.

1. Համայնքի ղեկավարի 13.02.2024թ. թիվ 101 որոշման վերնագրում գրված «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը փոխարինել «ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերով:
2. Համայնքի ղեկավարի 13.02.2024թ. թիվ 101 որոշման առաջին կետի երրորդ և չորրորդ տողում գրված «համայնքի սեփականությունը» բառերը փոխարինել «պետական սեփականություն» բառերով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մարտի 2024 թվականի N 229

ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԵՂՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի դ) կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով՝ որոշում եմ.

- Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքում հաստատել.
 - Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի՝
 - ԱՌԿ խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի.
- Խորհրդի անդամներին՝
 - մինչև սույն թվականի մայիսի 15-ը մշակել Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը.
 - յուրաքանչյուր տարվա մինչև փետրվարի 15-ը իրականացնել համայնքի ԱՌԿ պլանի ճշգրտում:
- ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալին՝ սույն որոշման 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ:
- Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մարտի 2024 թվականի N 230

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ստեփանավան համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով՝ որոշում եմ.

1. Հաստատել Ստեփանավան համայնքի.
 - 1) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.
 - 2) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Ստրգայան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamayanqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մարտի 2024 թվականի N 231

**ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 25.12.2023Թ. ԹԻՎ 972
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ղեկավարի 25.12.2023թ. թիվ 972 որոշումը և ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Համայնքի ղեկավարի 15.12.2023թ. թիվ 972 որոշման 2-րդ կետը՝ Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, փոխարինել՝
 Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և ընդգրկված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamayanqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մարտի 2024 թվականի N 232

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 25.12.2023Թ. ԹԻՎ 971
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ղեկավարի 25.12.2023թ. թիվ 971 որոշումը և ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Համայնքի ղեկավարի 15.12.2023թ. թիվ 971 որոշման 2-րդ կետը՝ հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, փոխարինել՝

Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և ընդգրկված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamayanqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մարտի 2024 թվականի N 233

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28.02.2024 Թ. N 182
ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ղեկավարի 28.02.2024թ. թիվ 182 որոշումը
և ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին
մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ղեկավարի 28.02.2024թ. թիվ 182 որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamayanqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մարտի 2024 թվականի N 234

ՀՀ ԼՈՐԻ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 28.02.2024 Թ. N 181
ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ղեկավարի 28.02.2024թ. թիվ 181 որոշումը
և ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին
մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ղեկավարի 28.02.2024թ. թիվ 181
որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamayanqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մարտի 2024 թվականի N 235

**ՀՀ ԼՈՐԻ ԿԱՏՈՎԱԿԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-007-0022-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ
ԾԱԾԿԱԳՐՈՎ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ 26/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ 06-007-0022-0042 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, Ք.
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ 26/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ժորա Անուշավանի Սիմոնյանի կողմից 06.11.2023թ. թիվ Ս-1089 դիմումը, թիվ 06112012-06-0254 և 21022024-06-0070 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 12 ապրիլի 2001 թվականի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ և 44-րդ կետերով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 27.04.2006թ. թիվ 570-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

- 06-007-0022-0038 կադաստրային ծածկագրով պուրակի հիմնանորոգման նպատակով անհրաժեշտություն է առաջանում՝ 06-007-0022-0031 կադաստրային ծածկագրով, ք. Ստեփանավան Մ. Բաղրամյան 26/1 հասցեում գտնվող, թիվ 06112012-06-0254 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով պետական գրանցում ստացած, Ժորա Անուշավանի Սիմոնյանին կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասի կառուցապատման իրավունքը դադարեցնել:
- Թիվ 21022024-06-0070 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով պետական գրանցում ստացած, 06-007-0022-0042 կադաստրային ծածկագրով, ք. Ստեփանավան Մ. Բաղրամյան 26/3 հասցեում

- գտնվող, 0.002 հա մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրել ժորա Անուշավանի Սիմոնյանին առևտրի օբյեկտ կառուցելու նպատակով:
3. Կառուցապատման իրավունքով տրամադրված, Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կառուցապատման իրավունքի օգտագործման ժամկետը սահմանել 50 տարի:
 4. Հողամասի վարձավճարի չափը սահմանել 1 քմ-ի համար տարեկան 4500 (չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ըստ որի 20 քմ հողամասի տարեկան վարձավճարը կազմում է 90000 (իննսուն հազար) ՀՀ դրամ:
 5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կողմերի միջև կնքել հողամասի կառուցապատման իրավունքի օգտագործման պայմանագիր:
 6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamayanqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մարտի 2024 թվականի N 236

**ՀՀ ԼՈՐՈՒՄ ԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-007-0022-0032 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ
ԾԱԾԿԱԳՐՈՎ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ 26/2 ՀԱՍՑԵՈՄ ԳՏԵՎՈՂ,
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ 06-007-0022-0041 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, Ք.
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ 26/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Արմինե Վոլոդյայի Բարսեղյանի կողմից 06.11.2023թ. թիվ Ս-1088 դիմումը, թիվ 06112012-06-0242 և 21022024-06-0069 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 12 ապրիլի 2001 թվականի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ և 44-րդ կետերով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 27.04.2006թ. թիվ 570-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

- 06-007-0022-0038 կադաստրային ծածկագրով պուրակի հիմնանորոգման նպատակով անհրաժեշտություն է առաջանում՝ 06-007-0022-0032 կադաստրային ծածկագրով, ք. Ստեփանավան Մ. Բաղրամյան 26/2 հասցեում գտնվող, թիվ 06112012-06-0242 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով պետական գրանցում ստացած, Արմինե Վոլոդյայի Բարսեղյանին կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասի կառուցապատման իրավունքը դադարեցնել:
- Թիվ 21022024-06-0070 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով պետական գրանցում ստացած, 06-007-0022-0042 կադաստրային ծածկագրով, ք. Ստեփանավան Մ. Բաղրամյան 26/3 հասցեում

գտնվող, 0.002 հա մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրել Արմինե Վոլոդյայի Բարսեղյանին առևտրի օբյեկտ կառուցելու նպատակով:

3. Կառուցապատման իրավունքով տրամադրված, Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կառուցապատման իրավունքի օգտագործման ժամկետը սահմանել 50 տարի:
4. Հողամասի վարձավճարի չափը սահմանել 1 քմ-ի համար տարեկան 4500 (չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ըստ որի 20 քմ հողամասի տարեկան վարձավճարը կազմում է 90000 (իննսուն հազար) ՀՀ դրամ:
5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կողմերի միջև կնքել հողամասի կառուցապատման իրավունքի օգտագործման պայմանագիր:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamayanqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մարտի 2024 թվականի N 237

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15.02.2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 119 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 15.03.2024 թվականի 19-Ա որոշումը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով Ստեփանավան համայնքի ղեկավարը **որոշում է.**

